

Բայց երբ երկնքում իրար դէմուդէմ
 Ամպերն են դիզւում՝ բանակառքանակ,
 Ահեղ ճայթումով խօւլ որոտում են,
 Եւ կրծքերի մէջ կրակ ու կայծակ—
 ...Նա լուռ յիշում է, որ տարիք առաջ
 Իրա սրտումն էլ կար տենչ ու կրրակ,
 Որոտ ու զայրոյթ, և սէր ու շառանչ...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՐԾԻԻՆ ՈՒ ԱՐՏՈՒՏԸ

Արծիւը կանգնած սև ժայռի գլխին՝
 Հանգիստ ու հպարտ նայում է չորս դին,
 Յաժն ամպեր ճերմակ լողում են ձորում,
 Վերևում վճիտ եթերն է ծորում:
 Եւ ձիւնադադաթ լեռների արքան
 Զորսդին է նայում, ասում ինքն իրան.
 Վինձնից բարձր էլ ո՞վ կարող է սլանալ,
 Այս վեհ բարձունքին ինձ պէս տէր դառնալ:

Յանկարծ երկնքի անհուն կապոյտից
 Անոյշ ճուռողիւն հնչեց բերկրալից...
 Արծիւն ահաւոր նայեց դէպի վեր,
 Տեսաւ՝ ոյժը չէ աշխարհին միշտ տէր:
 Արտուտը փաքրիկ մինչ երկինք հասած,
 Արևի ոսկի փայլումն ողողւած,
 Դուքն էր գեղգեղում կենսաբեր դարնան,
 Մահամերձ երկրի օրհներդն յարութեան:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ